



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

1 դեկտեմբերի 2022թ. թիվ 835-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 10-Ի ԹԻՎ 231-Ա  
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1)-ին կետով, հիմք ընդունելով «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 1)-ին կետը, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010թ. մարտի 18-ի թիվ 113-Ն հրամանով հաստատված «Պետական ուսումնական հաստատության» կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման» կարգի 6-րդ կետի 1)-ին ենթակետը և 7-րդ կետը, հաշվի առնելով «ՀՀ Լոռու մարզի Վանաձորի Բաֆֆու անվան թիվ 19 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի անդամի 25.11.2022թ. դիմումը և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 28.11.2022թ. թիվ 01/09.3/30167-2022 գրությունը՝

Ո ր ո շ ու մ եմ.

ՀՀ Լոռու մարզպետի 2021թ. մայիսի 10-ի «ՀՀ Լոռու մարզային ենթակայության պետական ուսումնական հաստատությունների խորհուրդների կազմերը հաստատելու և ՀՀ Լոռու մարզպետի 2016 թվականի մարտի 15-ի թիվ 75-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 231-Ա որոշման 1-ին հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունը՝

«23. «ՀՀ Լոռու մարզի Վանաձորի Բաֆֆու անվան թիվ 19 հիմնական դպրոց» ՊՈԱԿ» մասում «Նիսյան Արայիկ» բառերը փոխարինել «Սահակյան Ռուբեն» բառերով:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

01/12/2022

X

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2022թ. դեկտեմբերի 1  
ք.Վանաձոր